



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀրագՋԷԿ» ԲԲԸ-ի 2015 թվականի
գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները**

ԵՐԵՎԱՆ 2016

<u>ՆԱԽԱԲԱՆ.....</u>	<u>3</u>
<u>1. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....</u>	<u>4</u>
<u>2. «Հրազձեհ» ԲԲԸ-ի 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....</u>	<u>4</u>
<u>3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՏԱՐԿՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....</u>	<u>6</u>
<u>4. «Հրազձեհ» ԲԲԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....</u>	<u>7</u>

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի՝ իրականացրել է «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ նաև ընկերություն) գնումների առանձին գործարքների մոնիթորինգ:

«ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է գնումների գործընթացի՝ հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին (այսուհետ՝ լրացուցիչ պահանջներ) համապատասխանությունը գնահատելու նպատակով: Այդ նպատակով ընտրվել են 2015 թվականին բաց ընթացակարգով իրականացված բոլոր գործարքները (ընդամենը 4 գործարք), որոնք դիտարկվել են տարբեր տեսանկյուններից, մասնավորապես.

- 1) ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության մոնիթորինգ և գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության մոնիթորինգ,
- 2) մրցութային փաստաթղթերի մոնիթորինգ,
- 3) մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգ:

Գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է՝ հիմնվելով ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող գնումների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների, գնումներին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև հանձնաժողովի աշխատակազմի կողմից կատարված դիտարկումների արդյունքների հիման վրա:

1. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի 2015 թվականի գնումների առանձին գործարքների ուսումնասիրության, դրանց իրականացման արդյունքում ընկերության կողմից հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքին հասած լինելու հանգամանքը գնահատելու նպատակով: Այս համատեքստում հարկ ենք համարում նշել, որ կարգավորվող ընկերությունների գնումների գործընթացի՝ հանձնաժողովի կողմից կարգավորման և դրա հետագա մոնիթորինգի նպատակը ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման նպատակով ծախսվող միջոցների արդյունավետության բարձրացումն է, քանի որ դրանք ազդում են սպառողներին առաքվող էներգակիրների սակագների վրա: Այս առումով հիմնաքարային է գնումների բոլոր գործարքներում՝ անկախ ընտրված ընթացակարգերից, հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքին հասնելու ուղղությամբ ընկերության կողմից ձեռնարկված քայլերը ինչպես մինչև գնումների իրականացումը՝ դրանց պլանավորման փուլում, այնպես էլ իրականացման ընթացքում, նաև արդեն իսկ ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունման փուլերում: Ընդ որում, հարկ է նշել, որ ոչ միշտ են ընկերությունների կողմից առաջին հայացքից մրցակցային թվացող ընթացակարգերը ապահովում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքը, քանի որ նույն ժամանակ ընկերությունները կիրառում են այլ սահմանափակումներ, որոնք խաթարում կամ վատթարացնում են մրցակցությունը: Սույն վերլուծական տեղեկանքում գնումների առանձին գործարքները փորձ է արվել դիտարկել վերը նշված բոլոր գործոնների համատեքստում, ինչպես նաև ներկայացնել համապատասխան առաջարկություններ դրանց հետագա բարելավման նպատակով:

2. «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ն 2015 թվականի ընթացքում իրականացրել է 316,1 մլն ՀՀ դրամի գնումներ (առանց ԱԱՀ): Գնումներն իրականացվել են ինչպես ապրանքների, այնպես էլ աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ընդհանուր գնումների ծավալի 58%-ը (184,9 մլն դրամ) բաժին է ընկել աշխատանքներին և ծառայություններին,

իսկ 42%-ը (131,2 մլն դրամ)՝ ապրանքներին: Ընկերության կողմից գնումներն իրականացվել են մրցակցային երկխոսության ընթացակարգով, շրջանակային համաձայնագրերով, բաց մրցույթով, բանակցային ընթացակարգով և բանակցային ընթացակարգով, առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու: Գրաֆիկ 1-ում ներկայացված է իրականացված գնումների բաշխվածությունն ըստ գնման եղանակների, ապրանքների և ծառայությունների:

Գրաֆիկ 1



«ՀրազդէԿ» ԲԲԸ-ն մրցակցային եղանակների կիրառմամբ իրականացրել է գնումների 33%-ը, իսկ ոչ մրցակցային եղանակով՝ 67%-ը:

Ապրանքների դեպքում «ՀրազդէԿ» ԲԲԸ-ն տարբեր մրցակցային եղանակների կիրառմամբ իրականացրել է գնումների 29%-ը, իսկ ոչ մրցակցային եղանակով՝ 71%-ը: Ինչ վերաբերում է աշխատանքներին և ծառայություններին, ապա մրցակցային եղանակների կիրառմամբ իրականացված գնումները կազմել են 64%-ը, իսկ ոչ մրցակցային եղանակով՝ 36%-ը:

Գնումների կատարման ընթացակարգերը պետք է հիմնված լինեն գնումների


գործընթացում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի ապահովման վրա: Անկախ որևէ հանգամանքից, մինչև գնումների իրականացումը հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ և յուրաքանչյուր դեպքի համար հիմնավորեն գնումների ընթացակարգի ընտրությունը: Գնումների կատարման նախընտրելի ընթացակարգերը պետք է ապահովեն մրցակցությունը գնումների իրականացման ընթացքում:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՏԱՐԿՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոնիթորինգի իրականացման նպատակով ընկերության 2015 թվականի ընթացքում կատարված գործարքներից հանձնաժողովն առանձնացրել է բաց ընթացակարգով իրականացված գործարքները, որոնք 4-ն են և 2016 թվականի մարտի 25-ի ՇԿ-443Զ գրությամբ խնդրել է «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ին ներկայացնել նշված գործարքների հետ կապված մրցութային փաստաթղթերը:

Հանձնաժողովի կողմից ընտրված գործարքների ընդհանուր արժեքը կազմել է 90,5 մլն դրամ: Հանձնաժողովի կողմից ընտրված գործարքները կազմել են ընդհանուր գործարքների շուրջ 29%-ը: Ստորև գրաֆիկական պատկերի տեսքով առավել մանրամասն ներկայացված են դիտարկված գնումների գործարքների համամասնություններն ըստ ընթացակարգերի տիպերի:

Գրաֆիկ 2



Վերը նշված համամասնություններից կարելի է ենթադրել, որ իրականացված մոնիթորինգի արդյունքները հիմնականում բնութագրական են ընկերության բոլոր գնումների համար:

4. «ՀրազՋԷԿ» ԲԲԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ:

Մոնիթորինգի նպատակը՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

Մոնիթորինգի առարկան՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացված գնումների առանձին գործարքները, մասնավորապես՝

1. 200 ՄՎտ հզորությամբ էներգաբլոկի պահեստամասերի մատակարարման մրցույթ,
2. Ծծմբական թթու և կաուստիկ սողա քիմիական նյութերի մատակարարման մրցույթ,
3. 200 ՄՎտ հզորությամբ էներգաբլոկի ԲՃԳ-ի միջին նորոգման աշխատանքների գնման գործընթացի մրցույթ:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ նշված գործարքներում

«ՀրագՋԷԿ» ԲԲԸ-ն գնումների իրականացման ընթացակարգերը, ընդհանուր առմամբ, կազմակերպել է պատշաճ մակարդակով: Մասնավորապես՝

1. Գնման ընթացակարգերի փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:

2. Տնտեսական օպերատորի ընտրությունը կատարվել է ընկերության գնումների կարգին համապատասխան և հաղթող են ճանաչվել հրավերի պահանջները բավարարող, շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները:

3. Գնման պայմանագրերը կատարվել են պատշաճ մակարդակով՝ մատակարարման պայմանագրով սահմանված ժամկետում:

4. Պայմանագրով սահմանվել են վճարման ողջամիտ ժամկետներ:

Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ մրցույթներին տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունը հիմնականում չի գերազանցել մեկ մասնակիցը: Սովորաբար, մրցույթներին ցածր մասնակցությունը և բողոքարկումների բացակայությունը վկայում են տնտեսվարող սուբյեկտների կողմից ընկերության մրցույթների նկատմամբ վստահության ցածր մակարդակի կամ մրցույթի վերաբերյալ իրազեկվածության բացակայության մասին: Ընկերությունը սահմանափակվել է մրցույթն անցկացնելու վերաբերյալ տեղեկատվությունը ընկերության վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելով:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկվում է հետագայում մրցույթներին առավել բարձր մասնակցությունն ապահովելու նպատակով մասնակցության հայտեր ուղարկել կամ տեղեկացնել բոլոր պոտենցիալ մասնակիցներին՝ չսահմանափակվելով մրցույթն ընկերության ինտերնետային կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելով:

Մինևույն ժամանակ, գնման գործընթացում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի ապահովման նպատակով, առաջարկվում է մշակել շուկայի ուսումնասիրության գործընթացը կարգավորող ներքին ընթացակարգ, որի արդյունքում կփաստաթղթավորվեն շուկայի ուսումնասիրության արդյունքները և կընդլայնվեն ուսումնասիրության շրջանակները:

Ամփոփելով նշենք, որ անհրաժեշտ է հետևողական միջոցառումներ իրականացնել գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանրային

կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների պահպանման նպատակով: